

Մեզմէ յաւետ անդարձ մեկնող մեր ընկերներուն, ընկերուհիներուն եւ ուսուցիչներուն համար մէկ վարկեան յոտնկայս, յարգանք եւ լռութիւն: Մելգոնեանի Քայլերգ

Հեռաւոր սիրելիներս, Մելգոնեանցի հարազատներս եւ ամենայարգարժան ուսուցիչներս.

Մեր ամենապաշտելի եւ ամենասիրելի կրթական հաստատութեան 85 ամեակն է ահաւասիկ, որքան ցաւալի է մեզի համար որ սա բոլորիս Մելգոնեանի 85 ամեակը կը տօնենք մեր սիրելի դպրոցէն հեռու Հայրենիքի հողերուն վրայ. Ասիկա ցաւալի է մեզի համար որ բոլորս ալ անխտիր մեզմէ յաւետ անդարձ մեկնող ընկերներուն ընկերուհիներուն եւ ուսուցիչներուն հետ տօնեցինք 40 ամեակը հարազատ հողերու վրայ այսօրուայ պէս վստահ եմ մեր բոլորին սրտերուն եւ մտքերուն մէջ կը ծաղկին այդ հոյակապ օրերը. Երազային բայց միաժամանակ ընկերային մեր անխարդախ նուաճումներով տօնած էինք այդ հոյակապ հաստատութեան Մելգոնեան կրթական հաստատութեան 40 ամեակը: Հիմայ անկէ հեռու դարձեալ մեր մտքերուն, մեր աչքերուն, մեր հոգիին, մեր մտածումի յիշատակներուն մէջ զայն թողելով, ամենափառքեալ Աստուծոյ կամքովը հոս այս հաւաքոյթներով կը տօնենք մեր սիրելի կրթական հաստատութեան 85 ամեակը:

Մենք բոլորս ալ, սան սանուհի, տառտամ եւ թողթոջ քայլերով, 60ական թուականներու Սեպտեմբերեան օրերուն կը մտնէինք այդ հաստատութեան դռնէն ներս: Դուռ մը որ միայն կը բացուէր Հայ երիտասարդին եւ երիտասարդուհիին չամփելու Հայ ոգիով տոգորուած կրթութիւն մը, կեանք մը եւ ամբողջ ապագայ մը: Դժբախտաբար լումայապաշտ աշխարհը սա վարկեանին մեզի թոյլ չի տար որ մեր վերապրող խրճուանքը կարենայինք ըմբռնել մեր ամենասիրելի եւ ամենապաշտելի հաստատութեան հողերուն վրայ: Մեր սիրտը կ'այրի հիմայ սակայն ամեն մի Մելգոնեանցի կը հաւատայ որ Մելգոնեանը դառձեալ պիտի ծնի իր մոխիրներէն որպէս փիւնիկը Հայ կրթական մշակութային ու ազգային իրականութեան: Գիտենք որ նահանջ մը կայ արեւմտահայ եւ բովանդակ Հայ աշխարհին մէջ լեզուի եւ կրթական գործունէութեանց գիծով: Առանց Մելգոնեանի այդ նահանջը չի լուծուիր: Մելգոնեանը բուժարանն է արեւմտահայ ազգային նահանջի հիւանդութեան: Մելգոնեանը միակ վավերականն է Հայ մնալու, Հայ ապրելու մեր ազգային ջանքերուն:

Գիտութիւնը, կրթութիւնը, սեռը մարդկութեան հանդէպ եւ ամենահզոր օգտակար մարդ ըլլալու ճամբան ու լոյսը մեզի ցոյց տուաւ Մելգոնեանը: Ընկերներէս մէկուն ըսածին պէս այդ հաստատութեան մեզի ձօնած 1 ձիթապտուղն իսկ չի կրնար փոխադառնուիլ որեւէ գանձով:

Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը գաբանակ մը եղած է ոչ միայն սան սանուհիներուն այլ այն բոլորին որոնք վախազդու օրերէն փրկուած ու իրենց հանգրուանը գտած էին Կիպրոսի մէջ:

Համայն մարդկութեան համար Կարապետ եւ Գրիգոր Աղա Մելգոնեանները եղան անփոխադարձ տուչութեան ամենահզոր գազաթներէն մէկը: Անոնց շնորհիւ է որ ես եւ դուք սիրելի ընկեր եւ ընկերուհիներս կեանքի արեղծուածին մէջ եւ անոր

խորթ ու բորդ ճամբաներուն վրայ կրցանք գտնել մեզ շիտակ ուղիին տանող լոյսի աղբիւրը:

Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1968 ի հունձքը որոնցմէ մեծամասնութիւնս որ հոս կը գտնուինք առանց մեր խօսքը դրժելու, հայը հայով հայուն համար մեր նախաբանին հետեւելով ծառայեցինք եւ դեռ կը ծառայենք մեր ազգին, մեր գիրին, մեր գրականութեան, մեր եկեղեցիին եւ ինչու չէ համայն մարդկութեան: Ծառայելու ու իր գիտցածն ու ունեցածը ազգին մատուցանելու գաղափարները մեզի սորվեցուցին Պարոն Համպոյանը, Պր. Ճիզմէճեանը, Պր. Աբգարեանը, եւ նման ուսուցիչներու հոյլ մը որ մեր կրթական տարիներուն ի գործ դրին իրենց բոլոր ջանքերը մեզի մարդ դարձնելու:

Մելգոնեանի մեր բոլոր ուսուցիչներն ալ անգուգական նուիրեալներ էին հայ ազգին, հայ գրականութեան եւ հայ պատմութեան որոնք կը յիշենք որդիական ակնածանքով եւ գլուխ կը խոնարհենք անոնց որոնք մեզմէ հեռացան առյաւետ եւ անոնց կը մատուցենք մեր տարիներու պաշտամունքը եւ յարգանքը: Կեցցէ Մելգոնեանը եւ կեցցէ Մելգոնեանցին:

Վերապրողներուն արեւշատութիւն եւ առողջ կեանք մը մաղթելով անոնց մէջ կը տեսնենք որ արեւու պէս կը փայլի մեր հոյակապ կրթական մշակը եւ մեծագոյն ջահակիրներէն հայ կրթութեան ռահվիրաներէն ` Ս. Աբգարեան:

Բիւզանդ Ագպաշեան